Կազմված է «17» «մայիս» 2023թ.
Բաղկացած է 26 թերթից

Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
« Հ Ա Յ Փ Ո Ս Տ »
փակ բաժնետիրական ընկերության
բաժնետեր
Հայաստանի Հանրապետության՝
ի դեմս ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
« 17» մայիս 2023թ.
Թիվ 767-Ա հրամանով

ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարար
Ռ. Խաչատրյան
«17» «մայիս» 2023թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է՝
ՀՀ արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
գործակալության կողմից12.10.1994թ.
գրանցման համար՝ 286.140.00393 ՀՎՀՀ՝ 02507464
04.04.2008թ. գրանցված կանոնադրության
թիվ 002-2 փոփոխությունը գրանցված է ՀՀ
արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
գործակալության կողմից

«02» «05» 2023թ.

աշխատակից՝

«Հ Ա Յ Փ Ո Ս Տ»
Փակ բաժնետիրական ընկերության

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

/նոր խմբագրությամբ/

2023թ.

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

1.1. «Հայփոստ» Փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է 1994թ-ին ՀՀ կապի նախարարության «Հայփոստ» պետական ձեռնարկություն կազմակերպաիրավական ձևով, այնուհետ, Հայաստանի Հանրապետության կառավարության 1995 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1992 թվականի հուլիսի 13-ի թիվ 399 որոշմամբ սահմանված ցանկում փոփոխություն և լրացում կատարելու մասին» թիվ 113 որոշմամբ վերակազմակերպվել է Հայաստանի Հանրապետության կապի նախարարության «Հայփոստ» հատուկ նշանակության պետական ձեռնարկության: Հայաստանի Հանրապետության կառավարության 27.11.1997թ.-ի թիվ 538 և դրա հիման վրա ընդունված Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության 08.01.1998թ. թիվ 1 հրամանի հիման վրա ՀՀ Կապի նախարարության «Հայփոստ» հատուկ նշանակության պետական ձեռնարկությունը վերակազմակերպվել է Հայաստանի Հանրապետության փոստի և հեռահաղորդակցության նախարարության «Հայփոստ» պետական փակ բաժնետիրական ընկերության: Այնուհետև, ՀՀ կառավարության 29.05.1999թ. թիվ 358 որոշման, ՀՀ Փոստի և հեռահաղորդակցության 21.06.1999թ. թիվ 37 և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության 18.09.2001թ. թիվ 205 հրամանների համաձայն «Հայփոստ» ՓԲԸ-ն միացման ձևով վերակազմակերպվել է և ընկերությանը միացել են «Երևանի փոստատուն դուստր», «Դրամական փոխադրությունների փոխանակում դուստր», «Արագածոտնի փոստատուն դուստր», «Արարատի փոստատուն դուստր», «Արմավիրի փոստատուն դուստր», «Գեղարքունիքի փոստատուն դուստր», «Լոռու փոստատուն դուստր», «Կոտայքի փոստատուն դուստր», «Շիրակի փոստատուն դուստր», «Սյունիքի փոստատուն դուստր», «Վայոց Ձորի փոստատուն դուստր», «Տավուշի փոստատուն դուստր» փակ բաժնետիրական ընկերությունները: Ընկերությունը հանդիսանում է սույն կետում նշված դուստր ընկերությունների իրավահաջորդը:

1.2. Ընկերության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է:

1.3. Ընկերության կազմակերպաիրավական ձևն է՝ փակ բաժնետիրական ընկերություն:

1.4. Ընկերության հիմնադիր փաստաթուղթը սույն կանոնադրությունն է, որի պահանջները պարտադիր են Ընկերության բաժնետերերի և կառավարման մարմինների համար:

1.5. Սույն Կանոնադրությամբ սահմանվում են՝

ա) Ընկերության ֆիրմային անվանումը՝ լրիվ, կրճատ.

բ) Ընկերության գտնվելու վայրը.

գ) կանոնադրական կապիտալի չափը.

դ) Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի տեսակները (սովորական և(կամ) արտոնյալ), քանակը, անվանական արժեքը, ինչպես նաև արտոնյալ բաժնետոմսերի դասերը (եթե այդպիսիք կան).

ե) յուրաքանչյուր տեսակի և դասի բաժնետոմսերով հավաստվող իրավունքները.

զ) յուրաքանչյուր տեսակի և դասի բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները.

է) Ընկերության կառավարման մարմինների կազմավորման կարգը, կազմը և իրավասությունները, նրանց կողմից որոշումներ ընդունելու կարգը, ներառյալ՝ այն հարցերով, որոնցով որոշումներն ընդունվում են միաձայն կամ ձայների որակյալ մեծամասնությամբ.

ը) ժողովի նախապատրաստման և անցկացման կարգը.

թ) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանապետության օրենքով նախատեսված այլ դրույթներ.

1.6. Սույն կանոնադրությամբ սահմանվել են փակ բաժնետիրական ընկերության իրավական ընդհանուր կարգավիճակը, կառավարման սկզբունքները, բաժնետերերի ընդհանուր իրավասությունները և այլ կարևոր դրույթներ՝ անկախ այն հանգամանքից, որ Ընկերության տեղաբաշխված բոլոր բաժնետոմսերը պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, ինչը առաջ է բերում Ընկերության կառավարման օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված որոշակի առանձնահատկություններ:

1.7. Սույն կանոնադրությամբ չնախատեսված Ընկերության գործունեությանը վերաբերող հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով և այլ իրավական ակտերով:

1.8. Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանումով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ Կառավարություն) կողմից սահմանված այլ վավերապայմաններ պարունակող կլոր կնիք: Վերջինս կարող է պարունակել նաև Ընկերության ֆիրմային անվանումն այլ լեզուներով, ինչպես նաև նրա ապրանքային նշանի պատկերը կամ խորհրդանիշը:

1.9. Ընկերությունը կարող է ունենալ իր ֆիրմային անվանումը պարունակող դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև խորհրդանիշ և օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային, առևտրային և այլ նշաններ:

1.10. Ընկերության գտնվելու վայրն է՝ ք. Երևան, Սարյան 22:

Ընկերության փոստային հասցեն է՝ 0002, Սարյան 22, Երևան, Հայաստանի Հանրապետություն:

1.11. Ընկերության լրիվ ֆիրմային անվանումն է՝

ա) հայերեն՝ «Հայփոստ» Փակ բաժնետիրական ընկերություն,

բ) անգլերեն՝ "Haypost" Close Joint Stock Company,

գ) ռուսերեն՝ Закрытое Акционерное Общество "Айпост"

1.12. Ընկերության կրճատ ֆիրմային անվանումն է՝

ա) հայերեն՝ «Հայփոստ» ՓԲԸ

բ) անգլերեն՝ "Haypost" CJSC

գ) ռուսերեն՝ ЗАО "Айпост"

Գլուխ 2. Ընկերության իրավական կարգավիճակը: Ընկերության կողմից իրականացվող տնտեսական գործունեությունը

2.1. Ընկերությունը շահույթ հետապնդող առևտրային կազմակերպություն է: Ընկերության կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:

2.2. Ընկերությունն ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է Ընկերության ինքնուրույն հաշվեկշռում: Ընկերությունն իրավունք ունի իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

2.3. Որպես փակ բաժնետիրական ընկերություն՝ Ընկերության բաժնետոմսերը կարող են բաշխվել միայն նրա բաժնետիրոջ (բաժնետերերի) կամ նախապես որոշված այլ անձանց միջև: Ընկերությունն իրավունք չունի անցկացնել իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն կամ այլ կերպ առաջարկել անսահմանափակ թվով անձանց ձեռք բերել դրանք:

2.4. Ընկերությունը կարող է ունենալ ոչ ավելի, քան 49 բաժնետեր: Բաժնետերերի թիվը 49-ից ավելի դառնալու դեպքում՝ Ընկերությունը մեկ տարվա ընթացքում պետք է վերակազմավորվի բաց բաժնետիրական ընկերության կամ համապատասխանաբար կրճատի իր բաժնետերերի քանակը, հակառակ դեպքում Ընկերությունը ենթակա է լուծարման դատական կարգով:

2.5. Ընկերությունը կարող է ունենալ օրենքով չարգելված գործունեության ցանկացած տեսակներ իրականացնելու համար անհրաժեշտ քաղաքացիական իրավունքներ և կրել քաղաքացիական պարտականություններ:

2.6. Գործունեության առանձին տեսակներով, որոնց ցանկը սահմանվում է օրենքով, Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա: Եթե որևէ լիցենզավորված գործունեությամբ զբաղվելու դեպքերում Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով արգելվում է այլ տնտեսական գործունեության իրականացումը, ապա Ընկերությունը կարող է զբաղվել բացառապես այն գործունեությամբ, որը թույլատրված է նման իրավական կարգավիճակ ձեռք բերած ընկերությունների համար:

2.7. Ընկերությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում:

2.8. Ընկերությունը մատուցում է փոստային կապի ծառայություններ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով: Ընկերությունն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատոր:

2.9. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ապահովում է սպառողների շահերի պատշաճ պաշտպանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված կարգով: Ընկերությունը սպառողների համար մատչելի ձևով (Ընկերության խորհրդի սահմանած ձևերով) հրապարակում է Ընկերության կողմից մատուցվող ունիվերսալ ծառայությունների սակագները, ծառայությունների տեսակները, ինչպես նաև սպառողների խախտված իրավունքների պաշտպանության և Ընկերության աշխատակիցների գործողությունների բողոքարկման կարգը:

2.10. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում պետական իրավասու մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա պետությունների օրենսդրություններով սահմանված կարգով հաճախորդի գույքի կամ դրամական միջոցների արգելադրման, առգրավման, բռնագրավման կամ բռնագանձում տարածելու հետևանքով հաճախորդի կրած վնասների համար:

2.11. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով և այլ ակտիվներով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

2.12. Ընկերությունը կարող է ունենալ սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք, արժեթղթեր, գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ:

2.13. Իր գործունեությունն իրականացնելիս Ընկերությունը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և Ընկերության ներքին իրավական այլ ակտերով:

2.14. Ընկերությունն իր հիմնական միջոցների և այլ ակտիվների տիրապետումը, օգտագործումը և տնօրինումն իրականացնում է ինքնուրույն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Գլուխ 3. Ընկերության բաժնետոմսերը

3.1. Ընկերության բաժնետոմսերը բաժնետերերի միջև տեղաբաշխվում են փակ բաժանորդագրության ձևով: Թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխման գինը դրանց անվանական արժեքն է կամ Խորհրդի կողմից որոշվող շուկայական արժեքը: Շուկայական արժեքը որոշվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Ընկերությունը տեղաբաշխել է միայն հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3.2. Ընկերության մեկ սովորական բաժնետոմսը տվյալ բաժնետիրոջը (բաժնետոմսի սեփականատիրոջը) տալիս է ընդհանուր ժողովում մեկ ձայնի իրավունք:

3.3. Ընկերությունը կարող է օրենքով սահմանված կարգով թողարկել և տեղաբաշխել արտոնյալ բաժնետոմսեր, որոնց տեսակարար կշիռը կանոնադրական կապիտալում չի կարող լինել 25 տոկոսից ավելի:

Արտոնյալ բաժնետոմսեր թողարկելու դեպքում սույն կանոնադրությամբ պետք է սահմանվեն դրանց տեսակների և դասերի վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև դրանց սեփականատերերի իրավունքներն ու պարտականությունները սահմանող կանոններ:

3.4. Ընկերության բաժնետերերի ռեեստրը վարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գլուխ 4. Ընկերության պարտատոմսերը և այլ արժեթղթերը

4.1. Ընկերությունը կարող է թողարկել անվանական կամ ըստ ներկայացնողի պարտատոմսեր օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

4.2. Ընկերության պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկումը կատարվում է խորհրդի որոշմամբ, որում սահմանվում են պարտատոմսերի մարման ձևը, ժամկետները և այլ պայմանները: Բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսերի թողարկումը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.3. Ընկերությունը կարող է թողարկել միաժամանակյա, ինչպես նաև տարաժամկետ (Ընկերության կողմից սահմանված ժամկետային հաջորդականությամբ) մարման ժամկետով պարտատոմսեր:

4.5. Ընկերությունն իրավունք ունի թողարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ արժեթղթեր:

4.6. Ընկերության անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրը Ընկերությունը վարում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով: Ընկերությունը կարող է (իսկ օրենքով սահմանված դեպքերում պարտավոր է) իր թողարկած անվանական արժեթղթերի ռեեստրը հանձնել մասնագիտացված պահառուի:

Գլուխ 5. Ընկերության բաժնետերերը

5.1. Ընկերության բաժնետեր կարող են լինել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք, Հայաստանի Հանրապետությունը, համայնքները, այլ սուբյեկտներ՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

5.2. Ընկերության յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները:

5.3. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար, եթե այդպիսիք չի ստանձնել որպես երրորդ անձ կամ երաշխավոր:

5.4. Ընկերության բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

5.5. Իր կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց վճարումը ոչ լրիվ կատարած բաժնետերը Ընկերության պարտավորությունների համար կրում է համապարտ պարտավորություն իր կողմից չվճարված ներդրման սահմաններում:

5.6. Եթե Ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ է հանդիսանում բաժնետերերի կամ այլ անձանց գործունեությունը (անգործությունը), որոնք ունեն Ընկերությանը կատարման համար պարտադիր ցուցումներ տալու իրավունք կամ Ընկերության գործունեությունն այլ կերպ կանխորոշելու հնարավորություններ, ապա Ընկերությանը պատկանող գույքը չբավարարելու դեպքում այդ բաժնետերերի կամ այլ անձանց վրա կարող է դրվել լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն՝ Ընկերության պարտավորությունների համար: Նշված բաժնետերերի կամ այլ անձանց գործողությունները (անգործությունը) համարվում են Ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ միայն այն դեպքում, եթե նրանք օգտագործել են իրենց այդ իրավունքը կամ հնարավորությունները Ընկերությանը որոշակի գործողություններ

կատարելուն կամ չկատարելուն պարտադրելու նպատակով, նախօրոք իմանալով, որ այդ պատճառով Ընկերությունը կհայտնվի անվճարունակության (սնանկության) վիճակում:

5.7. Ընդհանուր ժողովում ձայնի իրավունքից օգտվում են միայն լրիվ վճարված սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը:

5.8. Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերն իրավունք ունի՝

ա) մասնակցել ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.

բ) մասնակցել Ընկերության կառավարմանը.

գ) ստանալ շահութաբաժիններ՝ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից.

դ) առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ.

ե) ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի (գաղտնի փաստաթղթերի ցանկը սահմանվում է Ընկերության Ժողովի որոշմամբ և օրենքով), այդ թվում՝ ցանկացած ժամանակ ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը: Նշված տեղեկությունները բաժնետերերին տրամադրվում են էլեկտրոնային տարբերակներով կամ խորհրդի կողմից սահմանված այլ ձևով.

զ) ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.

է) հանդես գալ առաջարկություններով ժողովներում.

ը) ժողովներում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.

թ) դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.

ժ) Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իր հասանելիք մասը.

ժա) ունենալ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

Հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատիրոջը չի կարող տրամադրվել նրան պատկանող հասարակ (սովորական) բաժնետոմսերի անվանական արժեքից և քանակից չբխող լրացուցիչ ձայնի իրավունք: Հասարակ (սովորական) բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումներն Ընկերության կողմից չեն երաշխավորվում:

5.9. Ընկերության բաժնետերն ունի այդ Ընկերության այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք: Եթե 30 օրյա ժամկետում բաժնետերերից ոչ մեկը չի օգտվում նախապատվության իր իրավունքից, ապա Ընկերությունն իրավունք ունի այդ բաժնետոմսերը ձեռք բերել սեփականատիրոջ հետ համաձայնեցված գնով: Ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելուց հրաժարվելու կամ դրանց գնի վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում բաժնետոմսերը կարող են օտարվել երրորդ անձի: Ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելու կամ դրանից հրաժարվելու մասին որոշումը կայացնում է Ընկերության խորհուրդը, բացառությամբ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:

5.10. Ընկերության բաժնետերերն ունեն կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք: Նշված իրավունքի իրականացման համար բաժնետերը դիմում է ներկայացնում Ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխման մասին որոշման ընդունման օրվանից 10 օրվա ընթացքում:

5.11. Ընկերության բաժնետերը պարտավոր է՝

ա) բաժնետոմսերի թողարկման որոշմամբ սահմանված ժամկետներում լրիվ վճարել իր կողմից ձեռք բերված բաժնետոմսերի արժեքը.

բ) ձեռնպահ մնալ Ընկերության հաճախորդների (գործընկերների) և Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հրապարակումից կամ այլ կերպ այլ անձանց դրանք հայտնի դարձնելուց.

գ) կատարել Ընկերության կառավարման մարմինների որոշումները.

դ) ենթարկվել օրենքների, այլ իրավական ակտերի և սույն կանոնադրության պահանջներին:

Ընկերության բաժնետերերը կարող են կրել նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ պարտականություններ:

5.12. Ընկերության բոլոր բաժնետոմսերը պատկանում են մեկ անձի՝ Հայաստանի Հանրապետությանը, ինչի արդյունքում Ընկերության կառավարման նկատմամբ տարածվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված առանձնահատկությունները:

Գլուխ 6. Ընկերության կանոնադրական կապիտալը, դրա ավելացումը և նվազեցումը:

6.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 520993200 ՀՀ դրամ, որը կազմում է 9542 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 54600 դրամ:

6.2. Բոլոր 9542 հասարակ (սովորական) բաժնետոմսերը տեղաբաշխված և լրիվ վճարված են և սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը: Ընկերության 100 % բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահված են Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը (այսուհետ՝ Լիազոր մարմին)՝ համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N 1233-Ն որոշման:

6.3. Ընկերության բոլոր բաժնետոմսերը սովորական են:

6.4. Ընկերությունը կարող է կանոնադրական կապիտալի չափը փոխել բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ուժի մեջ է մտնում սույն կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելուց և օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով գրանցելու պահից:

6.5. Ընկերությունն իրավունք ունի օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով ավելացնել կանոնադրական կապիտալը:

6.6. Եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի արժեքի գումարը լրիվ վճարված չէ, ապա Ընկերությունը չի կարող մեծացնել կանոնադրական կապիտալը ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին:

6.7. Ընկերությունն իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնել կանոնադրական կապիտալը՝

ա) շահույթի մի մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ.

բ) ընկերության զուտ ակտիվների (սեփական կապիտալի) արժեքից կանոնադրական կապիտալի, պահուստային կապիտալի և արտոնյալ բաժնետոմսերի (եթե այդպիսիք կան) լուծարային ու անվանական արժեքների տարբերության ընդհանուր գումարը գերազանցող մասը լրիվ կամ մասնակի փոխանցելով կանոնադրական կապիտալ:

6.8. Բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով Ընկերությունը չի կարող ավելացնել կանոնադրական կապիտալն ավելի, քան ժողովի հաստատած վերջին հաշվեկշռում կամ վերջին աուդիտի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների արժեքն է:

6.9. Կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումն ընդունում է Ընդհանուր ժողովը:

6.10. Ընկերությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով նվազեցնել կանոնադրական կապիտալը՝ պահպանելով կանոնադրական կապիտալի նվազեցման գործընթացի համար օրենքով սահմանված պարտադիր պահանջները: Կանոնադրական կապիտալի նվազեցումը կարող է կատարվել՝

ա) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացմամբ.

բ) բաժնետոմսերի ընդհանուր քանակի պակասեցմամբ, այդ թվում՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում, դրանց մի մասի ձեռքբերմամբ և մարմամբ:

6.11. Կանոնադրական կապիտալի նվազեցման նպատակով Ընկերության կողմից բաժնետոմսեր կարող են ձեռք բերվել միայն բաժնետոմսերի սեփականատերերի համաձայնությամբ: Ընդ որում, այդ նպատակով Ընկերությանն առաջարկված բաժնետոմսերի ձեռքբերումն Ընկերության պարտականությունն է: Եթե ձեռքբերման առաջարկված բաժնետոմսերի քանակը գերազանցում է համապատասխան որոշմամբ սահմանված քանակը, ապա բաժնետերերից բաժնետոմսերը գնվում են նրանց առաջարկներին համամասնորեն:

6.12. Կանոնադրական կապիտալի նվազեցման կապակցությամբ բաժնետերերին վճարումները, բացառությամբ ընկերության զուտ ակտիվների արժեքն ընկերության կանոնադրական կապիտալի չափից պակասելու հիմքով կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքի՝ կատարվում են կանոնադրության պետական գրանցումից հետո:

6.13. Ընկերության զուտ ակտիվների արժեքն ընկերության կանոնադրական կապիտալի չափից նվազելու հիմքով ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը կատարվում է բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքի համամասնորեն պակասեցման ձևով՝ առանց բաժնետերերին որևէ հատուցման:

Գլուխ 7. Ընկերության հիմնադրամները և զուտ ակտիվները

7.1. Ընկերությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով:

7.2. Եթե պահուստային հիմնադրամը կազմում է կանոնադրությամբ սահմանված չափից ավելի փոքր մեծություն, ապա հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթից՝ առնվազն հինգ տոկոսի չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:

7.3. Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

7.4. Օրենքով կամ սույն կանոնադրությամբ կարող են նախատեսվել նաև այլ հիմնադրամներ:

7.5. Ընկերության զուտ ակտիվների արժեքը գնահատվում է հաշվապահական հաշվեկշռի կամ աուդիտորական վերստուգման տվյալներով՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

7.6. Եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, ապա Ընկերությունը պարտավոր է հայտարարել և սահմանված կարգով գրանցել իր կանոնադրական կապիտալի նվազումը:

7.7. Եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքը կազմում է բացասական մեծություն, ապա Ընկերության գործադիր մարմինը պարտավոր է Խորհրդին ներկայացնել արտահերթ ժողովի գումարման պահանջ: Նման դեպքերում արտահերթ ժողովում որոշում է կայացվում Ընկերության լուծարման կամ դրա գործունեությունը շարունակելու մասին:

7.8. Եթե սույն գլխի 7.7-րդ կետով նախատեսված դեպքերում կանոնադրական կապիտալի նվազեցման կամ Ընկերության լուծարման մասին որոշումը չի ընդունվել, ապա Ընկերության բաժնետերերը, պարտատերերը, ինչպես նաև լիազորված պետական մարմիններն իրավունք ունեն պահանջել Ընկերության լուծարում՝ դատական կարգով:

Գլուխ 8. Ընկերության շահույթի բաշխումը

8.1. Տարեկան գործունեության արդյունքում Ընկերության ստացված համախառն եկամտի և օրենքով թույլատրված նվազեցումների դրական տարբերությունը՝ հարկվող շահույթը, ենթակա է հարկման՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության համաձայն:

8.2. Ընկերության զուտ շահույթը որոշվում է որպես Ընկերության ստացած համախառն եկամտի, կատարված բոլոր նվազեցումների և վճարված հարկերի դրական տարբերություն:

8.3. Ընկերությունն իրավունք ունի որոշում ընդունելու (հայտարարելու) իր բաժնետերերին եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

8.4. Եթե ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում:

8.5. Եթե ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:

8.6. Ընկերության ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում ընդունել շահութաբաժիններ չվճարելու մասին և կուտակված շահույթն ուղղել կանոնադրական կապիտալ կամ օրենքով և այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված ընկերության այլ ֆոնդերի (հիմնադրամների) համալրմանը:

8.7. Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է ընդհանուր ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունումից 30 օր հետո:

8.8. Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար խորհուրդը օրենքով սահմանված կարգով կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ:

8.9. Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերով շահութաբաժինների վճարման մասին, եթե՝

ա) լրիվ չի վճարվել կանոնադրական կապիտալը.

բ) Ընկերությունը հետ չի գնել բոլոր բաժնետոմսերը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով.

գ) շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Ընկերության վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկության) հայտանիշներին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով.

դ) Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով:

8.10. Ընկերության շահութաբաժինների վճարման սահմանափակումների այլ դեպքերը սահմանված են «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Գլուխ 9. Ընկերության մասնաճյուղերը, ներկայացուցչությունները և հիմնարկները, դուստր կամ կախյալ ընկերությունները

9.1. Ընկերությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում կարող է հիմնել իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

9.2. Ընկերության մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելու մասին որոշումն ընդունում է Ընկերության խորհուրդը: Ընկերության մասնաճյուղերը և ներկայացուցչությունները գործում են Ընկերության խորհրդի կողմից հաստատված կանոնադրությունների հիման վրա:

9.3. Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը, գրանցումը և լուծարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Արտասահմանում մասնաճյուղեր կամ ներակայացուցչություններ հիմնելու դեպքում, հաշվի են առնվում տվյալ երկրի օրենսդրությամբ նախատեսված առանձնահատկությունները:

9.4. Ընկերության մասնաճյուղը Ընկերության՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Ընկերության գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանում է, որը գործում է Ընկերության կողմից տրված լիազորությունների սահմաններում: Որոշակի մասնաճյուղերի կանոնադրություններով կարող է նախատեսվել, որ վերջիններս հսկողություն են իրականացնում այլ (նույն տարաժաշրջանում գործող) մասնաճյուղերի (կամ այլ տարածքային ստորաբաժանումների) նկատմամբ: Նման հսկողության պայմանները սահմանվում են Ընկերության խորհրդի որոշմամբ և մասնաճյուղի կանոնադրությամբ:

9.5. Մասնաճյուղը կարող է իրականացնել նաև ներկայացուցչական գործառույթներ:

9.6. Ընկերության ներկայացուցչությունը Ընկերության՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Ընկերության գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանումն է, որը ներկայացնում է Ընկերությունը, ուսումնասիրում է ֆինանսական շուկան, Ընկերության անունից կնքում է պայմանագրեր, իրականացնում է համանման այլ գործառույթներ:

9.7. Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գույքը հաշվառվում է ինչպես Ընկերության հաշվեկշռում, այնպես էլ վերջիններիս առանձին հաշվեկշիռներում:

9.8. Ընկերությունը կարող է հիմնել նաև հիմնարկներ: Հիմնարկ է համարվում կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար Ընկերության ստեղծած իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությունը:

9.9 . Ընկերության հիմնարկ ստեղծելու մասին որոշումն ընդունում է Խորհուրդը:

9.10. Ընկերությունն իրավունք ունի ունենալ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր կամ կախյալ տնտեսական ընկերություններ: Դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծման կամ դրանց մասնակցության որոշումը կայացնում է Խորհուրդը:

Գլուխ 10. Ընկերության կառավարման մարմինները

10.1. Ընկերության կառավարման մարմիններն են՝

ա) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ընդհանուր ժողով).
բ) Ընկերության խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ).
գ) Ընկերության միանձնյա գործադիր մարմինը՝ Գլխավոր տնօրենը՝ (այսուհետ նաև՝ Գլխավոր գործադիր տնօրեն):

Գլուխ 11. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը

11.1. Ընդհանուր ժողովը Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է և օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է Ընկերության ընդհանուր ղեկավարում:

11.2. Ընդհանուր ժողովի իրավասությանը վերապահված հարցերով Ընդհանուր ժողովում որոշումներն ընդունվում են Ընկերության միակ բաժնետիրոջ կողմից՝ օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

11.3. Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով: Տարեկան ժողովը գումարվում է ֆինանսական տարվա ավարտից մինչև 6-րդ ամիսը ընկած ժամանակահատվածում:

11.4. Ընդհանուր ժողովը գումարվում է բաժնետերերի համատեղ նիստի կամ հարցման կարգով (հեռակա քվեարկություն)՝ օրենքով, սույն կանոնադրությամբ և Ընդհանուր ժողովի հաստատած ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

11.5. Ընդհանուր ժողովի անցկացման մասին ծանուցման կարգը, բաժնետերերին տրամադրվող նյութերի ցանկը սահմանվում է Ընդհանուր ժողովի վարման կարգով՝ օրենքի և սույն կանոնադրության պահանջներին համապատասխան:

11.6. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

ա) Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերը (բաժնետերերը) կամ անվանատերը (անվանատերերը)՝ իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով: Սույն ենթակետով նշված բաժնետոմսերի անվանատեր կարող է հանդիսանալ այն անձը, որի անունով, առանց սեփականության իրավունքի փոխանցման, հաշվառված են Ընկերության բաժնետոմսերը.

բ) Ընկերության կողմից արտոնյալ բաժնետոմսեր թողարկված և տեղաբաշխված լինելու դեպքերում՝ արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը (անվանատերերը)՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում՝ իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով.

գ) Ընկերության բաժնետեր չհանդիսացող Խորհրդի անդամները, Գլխավոր գործադիր տնօրենը՝ խորհրդակցության ձայնի իրավունքով.

դ) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամները.

ե) Ընկերության աուդիտն իրականացնող անձը (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերում).

զ) Ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված որոշակի հարցերի վերաբերյալ մասնագիտական գիտելիքներին տիրապետող անձինք՝ միայն իրենց մասնագիտական

կամ փորձագիտական գիտելիքներ պահանջող հարցերի քննարկման ժամանակ, եթե նման անձանց համապատասխան հրավեր է ուղարկվել օրենքով, սույն կանոնադրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

11.7. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության բաժնետերերի ցուցակը կազմվում է Խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

11.8. Ընկերությունը Ընդհանուր ժողովի անցկացման մասին իր բաժնետերերին ծանուցում է ընդհանուր ժողովի գումարման օրվանից 30 օր առաջ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Ծանուցման ժամկետի և այլ պայմանների չպահպանելը չի կարող հիմք հանդիսանալ այդ հիմքերով Ընդհանուր ժողովի որոշումներն անվավեր ճանաչելու համար, եթե Ընկերության բոլոր բաժնետոմսերը պատկանում են մեկ անձի կամ որոշումները ժողովում ընդունվել են ընկերության բոլոր բաժնետերերի միաձայնությամբ:

11.9. Եթե Ընկերության բաժնետերերի ռեեստրում գրանցված անձը բաժնետոմսերի անվանատերն է, ապա ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցումն ուղարկվում է նրան: Վերջինս պարտավոր է ծանուցումն ուղարկել այն անձանց, որոնց շահերը նա ներկայացնում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ նրա և այդ անձանց միջև կնքված պայմանագրով սահմանված ժամկետներում:

11.10. Ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում Խորհուրդը, որոշում է՝

ա) ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամն ու վայրը.

բ) ընդհանուր ժողովի օրակարգը.

գ) ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.

դ) ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու կարգը.

ե) բաժնետերերին ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը

զ) քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվեարկությունները կատարվելու են քվեաթերթիկներով:

11.11. Տարեկան ժողովից բացի գումարվող Ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

11.12. Արտահերթ ժողովը գումարվում է Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Ընկերության գործադիր մարմինների, վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ բաժնետերերի պահանջով: Արտահերթ ժողովները գումարվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

11.13. Արտահերթ ժողովի գումարման վերաբերյալ Խորհրդի որոշմամբ սահմանվում է արտահերթ ժողովի գումարման ձևը՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով:

11.14. Ընդհանուր ժողովի իրավասություններն են՝

ա) կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

բ) Ընկերության վերակազմակերպումը.

գ) Ընկերության լուծարումը.

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.

ե) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

է) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.

ը) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետգնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.

թ) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

ժ) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ժա) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը: Նշված հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Եթե սահմանված ժամկետում տարեկան ժողովը տեղի չի ունեցել, ապա արտահերթ ժողով կարող է հրավիրվել միայն Ընկերության լուծարման կամ սույն ենթակետում նշված հարցերը քննարկելու համար: Նշված հարցերով հրավիրված արտահերթ ժողովում այլ հարցեր քննարկվել չեն կարող, բացառությամբ սույն ենթակետում նշված հարցերով կայացված որոշումներով պայմանավորված կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքերի.

ժբ) ժողովի վարման կարգի հաստատումը.

ժգ) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.

ժդ) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը.

ժե) Շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքման մասին որոշման ընդունումը, եթե «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նման գործարքի կնքման համար պահանջվում է Ընդհանուր ժողովի որոշում.

ժզ) Խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունումը, եթե «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նման գործարքի կնքման համար պահանջվում է Ընդհանուր ժողովի որոշում.

ժէ) Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ օրենքով նախատեսված դեպքերում.

ժը) «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ կետի համապատասխան Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի Ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը, և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը.

ժթ) Խորհրդի նախագահի կամ անդամի, գլխավոր գործադիր տնօրենի աշխատանքի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի ու պայմանների որոշումը.

ի) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով որոշումների ընդունումը.

իա) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

11.15. Ընդհանուր ժողովի կողմից որոշումների կայացումն իրականացվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքով սահմանված կարգով:

11.16. Ընդհանուր ժողովն իրավունք չունի փոփոխել օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:

11.17. Ընդհանուր ժողովի ընդունած որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները Ընկերության բաժնետիրոջը (բաժնետերերին) ներկայացվում են պատվիրված նամակներ ուղարկելու, կամ առձեռն հանձնելու, կամ էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկելու միջոցով՝ այդ որոշումներն ընդունելու պահից՝ 45 օրվա ընթացքում:

11.18. Ընդհանուր ժողովի որոշումները կարող են նաև ընդունվել հեռակա քվեարկության (հարցման) միջոցով: Տարեկան ժողովը, ինչպես նաև սույն կանոնադրության 11.14. կետի «ժա» ենթակետով սահմանված դեպքում հրավիրված արտահերթ ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով:

11.19. Ընդհանուր ժողովի արձանագրությունը կազմվում է Ընդհանուր ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում՝ 2 օրինակով, որոնք ստորագրում են Ընդհանուր ժողովի նախագահը և քարտուղարը կամ միակ բաժնետիրոջ ներկայացուցիչը:

11.20. Ընդհանուր ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում ընդհանուր ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

Արձանագրության մեջ նշվում են՝

ա) Ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը.

բ) Ընկերության՝ տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը.

գ) Ընդհանուր ժողովին մասնակցած բաժնետերերին պատկանող ձայների գումարային քանակը.

դ) Ընդհանուր ժողովի օրակարգը.

ե) Ընդհանուր ժողովի նախագահը (նախագահությունը) և քարտուղարը (քարտուղարությունը):

11.21. Արձանագրությունը պետք է պարունակի Ընդհանուր ժողովում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, Ընդհանուր ժողովի ընդունած որոշումները:

Գլուխ 12. Ընկերության Խորհուրդը

12.1. Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք օրենքով և սույն կանոնադրությամբ վերապահված են Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը: Խորհուրդը գործում է Օրենքի, սույն կանոնադրության և Խորհրդի կանոնակարգով սահմանված կարգով և օրենքով, սույն կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում՝ Ընդհանուր ժողովի որոշումներով նախատեսված իրավասությունների շրջանակներում:

12.2. Խորհրդի անդամների համար կարող է սահմանվել պարգևավճար և (կամ) փոխհատուցում նրանց այն ծախսերի դիմաց, որոնք կապված են Խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Պարգևավճարի և (կամ) փոխհատուցման չափն ու վճարման կարգը սահմանվում են Ընդհանուր ժողովի որոշմամբ:

12.3. Ընկերությունը վարում է Խորհրդի անդամների ռեեստր, որը բաց է Ընկերության բաժնետերերի ծանոթացման համար և Խորհրդի անդամների մասին պարունակում է հետևյալ տվյալները՝

ա) անունը և ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը.

բ) աշխատանքի և (կամ) բնակության վայրը և հեռախոսահամարը կամ էլեկտրոնային կապի միջոցը և հասցեն.

գ) զբաղմունքը, մասնագիտությունը և կրթությունը.

դ) Խորհրդի կազմում ընտրվելու տարին, ամիսը, ամսաթիվը և Խորհրդի անդամությունից ազատվելու տարին, ամիսը, ամսաթիվը (եթե դա տեղի է ունեցել).

ե) քանի անգամ է վերընտրվել Խորհրդի կազմում.

զ) Ընկերության քվեարկող բաժնետոմսերի քանակը, որը պատկանում է Ընկերության բաժնետեր հանդիսացող Խորհրդի անդամին.

է) տեղեկություններ այլ իրավաբանական անձանց մասին, որոնցում նշված անձն զբաղեցնում է ղեկավար պաշտոններ (խորհրդի նախագահ կամ անդամ, տնօրեն, գլխավոր տնօրեն կամ վարչության, տնօրինության անդամ և այլն) կամ այլ պաշտոն, այդ պաշտոնում նրա իրավունքներն ու պարտականությունները, եթե տեղեկությունների տրամադրումով չեն խախտվում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները, ինչպես նաև տեղեկություններ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքով սահմանված հիմքերով այդ իրավաբանական անձի հետ փոխկապակցվածության մասին..

ը) Խորհրդի կանոնակարգով նախատեսված այլ տվյալներ:

12.4. Խորհրդի անդամ կարող է լինել Հայաստանի Հանրապետության քաղաքացի, օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող գործունակ անձը: Խորհրդի անդամ կարող է լինել Ընկերության բաժնետեր չհանդիսացող անձը: Ընկերության գործադիր մարմնի ներկայացուցիչները չեն կարող Խորհրդում մեծամասնություն կազմել:

12.5. Խորհրդի անդամների նկատմամբ Ընդհանուր ժողովի հաստատած Խորհրդի կանոնակարգով կարող են նախատեսվել այլ սահմանափակումներ և պահանջներ:

12.6. Խորհրդի քանակական կազմը սահմանվում է Ընդհանուր ժողովի որոշմամբ, բայց չի կարող երեք անդամից պակաս լինել:

12.7. Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան ժողովի կամ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում արտահերթ ժողովի կողմից՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են Խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո: Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում: Ընդհանուր ժողովը կարող է որոշում ընդունել Խորհրդի ցանկացած անդամի (բոլոր անդամների) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

12.8. Ընդհանուր ժողովին Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Ընկերության բաժնետերը (բաժնետերերը) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

12.9. Ընկերության այն բաժնետերերը, որոնք Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի տաս և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել Խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իրենց ներկայացուցչին: Այդ իրավունքը վերապահվում է նաև անվանատերերին: Այս դեպքում յուրաքանչյուր բաժնետեր Խորհրդում կարող է զբաղեցնել միայն մեկ տեղ: Սույն կետով նախատեսված Խորհրդի կազմում ընդգրկվելու իրավունք ունեցող անձանց նկատմամբ չի կիրառվում Ընդհանուր ժողովի հաստատած Խորհրդի քանակական կազմի սահմանափակումը:

12.10. Խորհրդի նախագահին ընտրում են Խորհրդի անդամները, Խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ Խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ: Խորհրդի նախագահը չի կարող Ընկերությունում այլ վճարովի պաշտոն զբաղեցնել:

Խորհրդի նախագահը՝

ա) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները.

բ) գումարում է Խորհրդի նիստերն ու նախագահում է դրանք.

գ) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը.

դ) նախագահում է ժողովներում:

12.11. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները խորհրդի որոշմամբ կատարում է Խորհրդի անդամներից մեկը:

12.12. Խորհրդի նիստերը գումարում է Խորհրդի նախագահը իր նախաձեռնությամբ՝ Խորհրդի անդամի, Ընկերության վերստուգող հանձնաժողովի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի, Ընկերության գործադիր մարմնի, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ անձանց պահանջով: Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է Ընդհանուր ժողովի հաստատած՝ Խորհրդի կանոնակարգով: Խորհուրդը կարող է հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով) ընդունել որոշումներ, ընդ որում այդ որոշումների վերաբերյալ Խորհրդի անդամները կարող են իրենց կողմ կամ դեմ տեսակետները ներկայացնել և քվեարկել էլեկտրոնային կապի միջոցներով՝ Խորհրդի կանոնակարգով սահմանված կարգով:

12.13. Խորհրդի նիստն իրավազոր է (քվորում ունի), եթե դրան մասնակցում են Խորհրդի անդամների կեսից ավելին: Եթե Խորհրդի անդամների թիվը նվազում է կանոնադրությամբ սահմանված թվի կեսից, ապա Ընկերությունը պետք է այն լրացնելու նպատակով արտահերթ ժողով գումարի, որի մասին որոշումը կայացնում է Խորհուրդը:

12.14. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ Խորհրդի կանոնակարգով այլ բան նախատեսված չէ: Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն 1 ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումը Խորհրդի մեկ անդամից մյուսին (այդ թվում՝ ցանկացած երրորդ անձի) չի թույլատրվում:

Եթե Խորհրդի անդամների ձայները բաշխվում են հավասարաչափ, ապա Խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք:

12.15. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 5-օրյա ժամկետում:

Արձանագրությունում նշվում են՝

ա) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.

բ) նիստին ներկա անձինք.

գ) նիստի օրակարգը.

դ) քվեարկության դրված հարցերը և քվեարկության արդյունքները.

ե) նիստում ընդունված որոշումները:

Խորհրդի նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

12.16. Խորհրդի իրավասություններն են՝

ա) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.

բ) Ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի.

գ) ժողովների օրակարգի հաստատումը.

դ) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք

կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են Խորհրդի իրավասությանը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, սույն կանոնադրության դրույթներին և ժողովի վարման կարգին համապատասխան.

ե) սույն կանոնադրության 11.14 կետի «բ», «ժգ-ժը» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը Ընդհանուր ժողովի քննարկմանը.

զ) պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը.

է) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.

ը) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը.

թ) Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով Ընկերության վերստուգող հանձնաժողովի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ Ընդհանուր ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.

ժ) Ընկերության Գլխավոր գործադիր տնօրենի կամ լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձի նշանակումը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

ժա) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը կամ դրանց մասնակցությունը.

ժբ) Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.

ժգ) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Ընդհանուր ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.

ժդ) Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.

ժե) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

ժզ) Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների և բաժանմունքների ստեղծումը.

ժէ) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված այնպիսի խոշոր գործարքների կնքումը՝ որոնք «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված են որպես Խորհրդի իրավասություն.

ժը) շահագրգռվածության առկայությամբ այնպիսի գործարքների կնքումը, որոնք «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված են որպես Խորհրդի իրավասություն.

ժթ) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

ի) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.

իա) Ընկերության աշխատանքային կանոնակարգերի հաստատումը,

իբ) Ընկերության հաստիքացուցակի, ստորաբաժանումների կանոնակարգերի, ըստ հաստատված հաստիքների՝ աշխատավարձերի տարեկան առավելագույն դրույքաչափերի սահմանների հաստատումը.

իգ) Ընկերության տարեկան հաշվետվությունը և տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատում՝ տարեկան ժողովի գումարման ամսաթվից առնվազն 30 օր առաջ

իդ) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

12.17. Խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության գործադիր մարմնի լուծմանը:

12.18. Խորհրդի նիստերի գումարման հաճախականությունը և այն հարցերի շրջանակը, որոնք պարբերաբար պետք է քննարկվեն Խորհրդի կողմից, ինչպես նաև Խորհրդի կողմից որոշումների ընդունման առանձնահատկությունները սահմանվում են Խորհրդի կանոնակարգով:

12.19. Խորհուրդն իր աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով կարող է ստեղծել հանձնաժողովներ: Խորհրդին կից հանձնաժողովներում կարող են ընդգրկվել Խորհրդի անդամներ, ինչպես նաև Ընկերության աշխատակիցներ: Խորհրդին կից գործող հանձնաժողովների որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ:

Գլուխ 13. Ընկերության միանձնյա գործադիր մարմինը՝ Գլխավոր գործադիր տնօրենը

13.1. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության միանձնյա գործադիր մարմինը՝ Գլխավոր տնօրենը (Գլխավոր գործադիր տնօրենը):

13.2. Գլխավոր գործադիր տնօրենը կազմակերպում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի և Խորհրդի որոշումների իրագործումը:

13.3. Գլխավոր գործադիր տնօրենի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ բաժնետերերի ընդհանուր ժողովի և խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերի:

13.4. Գլխավոր գործադիր տնօրենն իրավասու է՝

ա) Խորհրդի հաստատմանը ներկայացնել Ընկերության գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունը և բիզնես պլանը,

բ) հաստատել Ընկերության գործառույթների կատարման կարգերն ու ներքին կանոնակարգերը: Իր իրավասության սահմաններում սահմանել Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների գները, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում նշված հարցերի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել համապատասխան պետական մարմիններին.

գ) իր իրավասության սահմաններում ընդունել ընկերության տարեկան ֆինանսական ծրագրի նախագիծը, կազմել և Խորհրդի քննարկմանը ներկայացնել Ընկերության տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը (բյուջեն), ներդրումային ծրագրերը, ինչպես նաև դրանց կատարման վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնել Խորհրդին՝ Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված կարգով.

դ) ընդունել հաշվետվություններ ընկերության ֆինանսական գործունեության վերաբերյալ՝ Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված կարգով.

ե) Խորհրդի հաստատմանը ներկայացնել Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործման կանոնակարգերը,

զ) Խորհրդի հաստատմանը ներկայացնել Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը (պաշտոնացուցակը) ինչպես նաև Ընկերության աշխատանքային կանոնակարգը,

է) հաստատել Ընկերության ըստ հաստատված հաստիքների՝ աշխատավարձի դրույքաչափերը՝ Խորհրդի կողմից հաստատված աշխատավարձերի տարեկան առավելագույն դրույքաչափերի սահմանների շրջանակներում, բացառությամբ սույն կանոնադրության 11.14 կետի ժթ) ենթակետի,

ը) Ընկերության աշխատակիցների նկատմամբ կիրառել խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցները՝ օրենքով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված պայմաններով և կարգով.

թ) ստեղծել և լուծարել աշխատանքային հանձնաժողովներ.

ժ) որոշումներ կայացնել այն հարցերի շուրջ, որոնք սույն կանոնադրության համապատասխան պետք է ներկայացվեն Խորհրդի, հետագայում նաև ընդհանուր ժողովի քննարկմանը.

ժա) ներկայացնել Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.

ժբ) տնօրինել Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ կնքել Ընկերության անունից՝ օրենքներին, այլ նորմատիվ իրավական ակտերին, ինչպես նաև սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում՝ Խորհրդի կամ Ընդհանուր ժողովի որոշումներին համաձայն: Ընկերության անշարժ գույքի օտարման հետ կապված գործարքները նախապես համաձայնեցվում են խորհրդի հետ:

ժգ) Ընկերության անունից գործել առանց լիազորագրի.

ժդ) լիազորագրեր տալ Ընկերության անունից գործելու և հանդես գալու վերաբերյալ.

ժե) Ընկերության անունից կնքել պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

ժզ) բանկերում բացել Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ, ինչպես նաև սահմանված կարգով հաշիվ բացել Հայաստանի Հանրապետության պետական ֆինանսների կառավարման լիազոր մարմնի ստորաբաժանումում (գանձապետարանում).

ժէ) իրականացնել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավասություններ:

Գլուխ 14. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը և ստուգումը

14.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար Ընդհանուր ժողովն ընտրում է Ընկերության վերստուգող հանձնաժողով: Վերստուգող հանձնաժողովի իրավասությունները օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա կարող է իրականացվել Լիազոր մարմնի իրավասու

ստորաբաժանման կողմից՝ Ընկերություն մշտապես գործուղված ներքին աուդիտորների միջոցով:

14.2.Վերստուգող հանձնաժողովը հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն օրենքներին և այլ իրավական ակտերին ու կանոնադրությանը: Վերստուգող հանձնաժողովը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է օրենքով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև ժողովի կողմից հաստատված ներքին փաստաթղթով՝ վերստուգող հանձնաժողովի կանոնակարգով կամ Լիազոր մարմնի ներքին աուդիտի կանոնակարգով, որով սահմանվում են ստուգումների անցկացման կարգն ու առանձնահատկությունները:

14.3. Վերստուգող հանձնաժողովի պահանջով նրան պետք է ներկայացվեն Ընկերության, նրա մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների,դուստր և կախյալ ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը (այդ թվում գաղտնի), նյութերն ու բացատրությունները:

14.4. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը կարող է ներգրավել աուդիտն իրականացնող անձի՝ աուդիտորի (կազմակերպության կամ ֆիզիկական անձի), որը գույքային շահերով կապված չէ Ընկերության կամ նրա բաժնետերերի հետ՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր:

14.5. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն աուդիտորի կողմից կարող է իրականացվել նաև Ընկերության՝ քվեարկող բաժնետերերի առնվազն հինգ տոկոսի սեփականատեր բաժնետերերի պահանջով: Այդ դեպքում աուդիտորի ծառայությունները վճարում են ստուգում պահանջող բաժնետերերը:

14.6. Ընկերության աուդիտն իրականացնող անձին հաստատում է ժողովը: Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ պայմանագիրը կնքում է Խորհրդի նախագահը: Խորհուրդը որոշում է աուդիտն իրականացնող անձի ծառայությունների համար վճարվող գումարի չափը:

14.7. Սույն գլխի 14.5 կետով սահմանված դեպքում Ընկերության աուդիտն իրականացնող անձին ընտրում և նրա հետ պայմանագիր են կնքում ստուգումը պահանջող բաժնետերերը:

14.8. Ընկերության աուդիտն իրականացնող անձին ներկայացվող պահանջները սահմանվում են օրենքով և այլ իրավական ակտերով:

14.9. Վերստուգող հանձնաժողովը և Ընկերության աուդիտն իրականացնող անձն Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների արդյունքների հիման վրա պատրաստում է եզրակացություններ, որոնք պետք է պարունակեն՝

ա) Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունը.

բ) Ընկերության հիմնադրամների կազմավորման և դրանց նպատակային օգտագործման վերլուծությունը.

գ) Ընկերության հաշվետվություններում և այլ ֆինանսական փաստաթղթերում բովանդակող տեղեկությունների հավաստիության հաստատումը.

դ) Ընկերության կառավարման մարմինների որոշումների, հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական և այլ հաշվետվության համապատասխանության հաստատումը գործող օրենքներին և այլ իրավական ակտերին.

ե) ստուգման առանձնահատկությունների հետ կապված այլ տեղեկատվություններ:

14.10. Վերստուգող հանձնաժողովը և Ընկերության աուդիտն իրականացնող անձը Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է տարեկան ժողովին: Ընկերության տարեկան հաշվեկշռի հաստատման ժամանակ վերստուգող հանձնաժողովի կամ Ընկերության աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը պարտադիր է:

Գլուխ 15. Հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները

15.1. Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով Ընկերությունը վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում է ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություններ:

15.2. Գլխավոր գործադիր տնօրենը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման կազմակերպման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Ընկերության բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Ընկերության մասին տրամադրվող տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

15.3. Տարեկան ժողովի հաստատմանը ներկայացվող տարեկան հաշվետվության, տարեկան հաշվապահական հաշվեկշռի, շահույթների և վնասների հաշվի հավաստիությունը պետք է հաստատվի Ընկերության վերստուգող հանձնաժողովի եզրակացությամբ:

15.4. Ընկերության տարեկան հաշվետվությունը ենթակա է նախնական հաստատման Խորհրդի կողմից՝ տարեկան ժողովի գումարման ամսաթվից առնվազն 30 օր առաջ:

Գլուխ 16. Ընկերության փաստաթղթերի պահպանումը և բաժնետերերին տրամադրումը

16.1. Ընկերությունը պարտավոր է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ժամկետներում պահպանել՝

ա) Ընկերության պետական գրանցման վկայականը, կանոնադրությունը, կանոնադրությունում կատարված լրացումները և փոփոխությունները, կանոնադրությունը նոր խմբագրությամբ, Ընկերության հիմնադրման մասին որոշումը և պայմանագիրը.

բ) Ընկերության հաշվեկշռում արտացոլված գույքի նկատմամբ Ընկերության գույքային իրավունքները հավաստող փաստաթղթերը.

գ) ժողովի և կառավարման այլ մարմինների հաստատած՝ Ընկերության ներքին փաստաթղթերը.

դ) Ընկերության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները.

ե) Ընկերության տարեկան հաշվետվությունները.

զ) հաշվապահական հաշվառման փաստաթղթերը (ֆինանսական հաշվետվությունները, աուդիտորական եզրակացությունները և այլն).

է) պետական կառավարման մարմիններին ներկայացվող ֆինանսական ու վիճակագրական հաշվետվությունները.

ը) Ընդհանուր ժողովների, Խորհրդի, վերստուգող հանձնաժողովի արձանագրությունները.

թ) Ընկերության վերստուգող հանձնաժողովի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի, պետական և տեղական ինքնակառավարման ֆինանսական վերահսկում իրականացնող մարմինների եզրակացությունները.

ժ) Ընկերության փոխկապակցված անձանց (նրանց պատկանող բաժնետոմսերի քանակի մասին նշումով), ինչպես նաև Ընկերության նշանակալից և խոշոր բաժնետերերի ցուցակները.

ժա) Ընկերության կնքած պայմանագրերը.

ժբ) օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով, ներքին փաստաթղթերով, ժողովի, Խորհրդի որոշումներով նախատեսված այլ փաստաթղթեր:

16.2. Ընկերությունը պահպանում է սույն գլխի 16.1 կետով նշված փաստաթղթերը՝ իր գտնվելու վայրում:

16.3. Ընկերությունը պարտավոր է իր բաժնետերերին հնարավորություններ ընձեռել սույն գլխի 16.1 կետով նախատեսված փաստաթղթերին ծանոթանալու համար, բացառությամբ գաղտնի տեղեկությունների, ինչպես նաև Գլխավոր գործադիր տնօրենի հրամանների, հրահանգների: Գլխավոր գործադիր տնօրենի հրամանները և հրահանգները, ինչպես նաև այլ գաղտնի տեղեկությունները տրամադրվում են միայն Խորհրդի անդամներին և վերստուգող հանձնաժողովին (վերստուգողին)՝ վերջիններիս պահանջով:

16.4. Բաժնետիրոջ պահանջով Ընկերությունը հնգօրյա ժամկետում պարտավոր է նրան տրամադրել սույն գլխի 16.1 կետում նշված փաստաթղթերի պատճենները, բացի 16.3 կետում նշված փաստաթղթերից: Պատճեններ տրամադրելու համար վճարի չափը, որը սահմանում է Ընկերությունը, չի կարող դրանց պատրաստման և փոստային առաքման ծախսերից ավելի լինել:

16.5. Ընկերության յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի անվճար ստանալ վերջին տարեկան հաշվետվության և վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացության պատճենները:

17. Կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ: Ընկերության վերակազմակերպումը և լուծարումը

17.1 Սույն կանոնադրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելը, ինչպես նաև կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելը կատարվում է օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

17.2 Սույն կանոնադրության մեջ փոփոխությունները և լրացումները, ինչպես նաև նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Կանոնադրության մեջ կատարված լրացումներն ու փոփոխությունները, ինչպես նաև նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրությունը երրորդ անձանց համար ուժի մեջ են մտնում դրանց պետական գրանցման պահից:

17.3 Ընկերության վերակազմակերպումը (միաձուլումը, միացումը, բաժանումը, առանձնացումը, վերակազմավորումը) և լուծարումը կատարվում է ժողովի որոշմամբ՝ Հայաստանի Հանապետության քաղաքացիական օրենսգրով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում և կարգով: